Արձանագրություն N 3

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2017/1 ծածկագրով գնումներ կատարելու գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման արտահերթ նիստի

ք. Սևան 08 հունիսի 2017թ, ժ 15:00, ք. Սևան, Նաիրյան, 164

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Պ. Պետրոսյան – քաղաքապետի խորհրդական
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հովհաննիսյան – աշխատակազմի ԿՄՍԵ բաժնի պետ
Ա. Մարգարյան – քաղաքապետի օգնական
Ա. Ղուկասյան – քաղաքապետի խորհրդական
Է. Ղազարյան – ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Գնումների համակարգող

Ժողովը հրավիրվել է պատվիրատուի կողմից՝ գնումների համակարգող և հանձնաժողովի քարտուղար Ա. Ավետիսյանի պահանջով:

Օրակարգում
ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2017/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման, գնահատման, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որոշման վերանայման մասին

Հանձնաժողովի նախագահը բացելով նիստը նշեց, որ 2017թ. Հունիսի 7-ին կայացած գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին գնահատումը կատարվել է գործող օրենսդրությանը ոչ համապատասխան (գնահատումը կատարվել է արդեն չգործող օրենսդրությանը համապատասխան), ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել ներկայացված հայտերի վերագնահատում:

1. Կատարելով ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2017/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերագնահատում հանձնաժողովը որոշեց՝

1.1 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի Հրազդան փողոցի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման համար ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2017/1 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի	
	Անվանումը	Հասցեն
1	«Գոոպլասպ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ. Սարգսյան, 49
2	«Նաիրի-Նունե» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 16 փող., 1-ին փակ., 8
3	«Լուսի-Արեգ» ՍՊԸ	Ք. Երևան, Շիրակի, 90
4	«Հեր-Մուշ շին» ՍՊԸ	Ք. Գավառ, Ազատության, 54
5	«Սասունասար» ՍՊԸ	Ք. Երևան, ազատության նրբանցք, 4-րդ շենք, 75 բնակարան
6	«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ	Ք. Սևան, Խաղաղության, 12/28

1.2 Տվյալներ հայտերը ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերը ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

1.3 Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- հայտ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին, տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին, հայտարարություն հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին, գնի առաջարկ, տուժանքի մասին համաձայնություն: Բացված հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1.4 Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- ներկայացրած հայտերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջներին.

- «Գոռպլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես 3-րդ և 4-րդ սունյակներում արժեքը և ԱԱՀ-ն ներկայացված են միայն թվերով այնինչ պարտադիր պահանջ է դրանց ներկայացումը նաև տառերով:
- «Նաիրի-Նունե» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես 3-րդ և 4-րդ սունյակներում արժեքը և ԱԱՀ-ն ներկայացված են միայն թվերով այնինչ պարտադիր պահանջ է դրանց ներկայացումը նաև տառերով , իսկ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով հայտի ապահովման գումարի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսի փոխարեն ներկայացվել է 2 տոկոս
- «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով հայտի ապահովման գումարի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսի փոխարեն ներկայացվել է 2 տոկոս հայտի ապահովման գումար:
- «Հեև-Մուշ շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես 3-րդ և 4-րդ սունյակներում արժեքը և ԱԱՀ-ն ներկայացված են միայն թվերով այնինչ պարտադիր պահանջ է դրանց ներկայացումը նաև տառերով, իսկ հավելված 1-ում բացակայուն է էլեկտրոնային ստորագրությունը:
- «Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես 3-րդ և 4-րդ սունյակներում արժեքը և ԱԱՀ-ն ներկայացված են միայն թվերով այնինչ պարտադիր պահանջ է դրանց ներկայացումը նաև տառերով , իսկ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով հայտի ապահովման գումարի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսի փոխարեն ներկայացվել է 2 տոկոս:
- «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով հայտի ապահովման գումարի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսի փոխարեն ներկայացվել է 2 տոկոս հայտի ապահովման գումար:

Հայտերում առկա մյուս փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Քանի որ բոլոր հայտերում հարվերով սահմանված պահանջներին անհամապատասխան են կազմվել և ներկայացվել կամ գնային առաջարկը, կամ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում ներառված հայտի ապահովման գումարի չափը, ուստի ներկայացված բոլոր հայտերը ենթակա են մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1.5 Մասնակցների առաջարկած գները՝

Հ/Հ	Մասնակիցը			
		Արժեք /ներառում է ինքնարժեք ու շահույթ/ (ՀՀ դրամ)	ԱԱՀ (ՀՀ դրամ)	Առաջարկվող միավոր գները՝ ներառյալ ԱԱՀ-ն (ՀՀ դրամ)
1	«Գոռպլասպ» ՍՊԸ	5480000	-	5480000
2	«Նաիրի-Նունե» ՍՊԸ	3200000	-	3200000
3	«Լուսի-Արեգ» ՍՊԸ	4300000	860000	5160000
4	«Հեր-Մուշ շին» ՍՊԸ	4499000	899800	5398800
5	«Սասունասար» ՍՊԸ	5800000	1160000	6960000
6	«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ	3957548	791510	4749058

2. Հայտերի և դրանցում առկա գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց «Գոռպլասպ» ՍՊԸ-ի, «Նաիրի-Նունե» ՍՊԸ-ի, «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի, «Հեր-Մուշ շին» ՍՊԸ-ի, «Սասունասար» ՍՊԸ-ի և «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը մերժել և գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Պ. Պետրոսյան

Անդամներ՝ _____ Ա. Հովհաննիսյան

_____ Ա. Ղուկասյան

_____ Ա. Մարգարյան

_____ Է. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան